ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Մամուլի բնագավառի հարգելի՛ աշխատակիցներ, լրատվության բնագավառի սիրելի՛ ներկայացուցիչներ,

Ի սրտե շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ Հայ մամուլի օրվա առթիվ: Այս տոնը ևս մեկ առիթ է կարևորելու խոսքի ազատությունն ու դրա նշանակությունը մեր հասարակության կայացման և ճիշտ զարգացման գործում:

Մենք մեր համայնքում նույնպես անում ենք ամեն ինչ, որպեսզի պահպանենք և զարգացնենք հայ մամուլի դերն ու նշանակությունը մեր երկրում:

Անկողմնակալ աշխատելաոճի և լրագրողական էթիկետի նորմերի պահպանությունը թերևս ամենակարևորն է, որը կարող է ընդգծել ձեր աշխատանքի որակը, բերելով ձեզ լավ հեղինակություն և բարի համբավ: :

Հարգելի՛ լրագրողներ և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ, մաղթում եմ ձեզ մասնագիտական ձեռքբերումներ, ստեղծագործական հաջողություններ և նորանոր մտահաղացումներ, որոնք կլինեն պետականամետ և ճիշտ ձևով կընդգծեն մեր երկրի դեմքն ու դիմագիծը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ